ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2016 թվականի թիվ 10 - Ա

ԼԵՎՈՆ ՎԱՆՑՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2016 թվականի հունվարի 22-ի N 01/13/2/151-16 գրությունը և Լևոն Վանցյանի դիմումը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի /ծածկագիր՝ 70-2.1-6/ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Լևոն Նորայրի Վանցյանի հետ 2016թ. հունվարի 25-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքով թափուր պաշտոնը զբաղեցնելը:

2.«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի սանդղակի 1-ին մակարդակի գործակցի (4.70) կիրառմամբ՝ 310858 / երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ / դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2016թ. հունվարի 25
ք.Իջևան